# ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ



## ԴԻՆԴԻՐՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ

1813.

4. 5. 6. ՕԳՈՍՏՈՍ:

### ԻՆԿԻԼԴԷՐՌԱ.

Լօնտրա. 10 Յուլիսի:

Որովհետեւ Սիկիլիայի կառավարութիւնը շատ ատենէն պէրի կըբռնադատէրկոր զՍիկիլիայի Թագուհին որ անկից ելլայ երթայ ուրիշ տեղ, և Թագուհին ալ դէմ կըկենարկոր աս բանին, բայց վերջապէս պէտք եղաւ որ յանձն առնու, ու անկից ելլայ երթայ. ուստի ճամբայ ելաւ Սիկիլիայէն ու անցաւ Մալթա, Մալթայէն Ստամպօլ, Ստամպօլէն գնաց Նէմցէստան: Ճամբայ ելլալէն առաջ գրեց աս հետեւեալ նամակը Սիկիլիայի Ինկիլիզ գլխաւոր Ճէնէռալին՝ որուն անունը էր Պէնդինկ:

Թագուհին Սիկիլիայի առ պարոն Պէնդինկ Ճէնէռալ:

" Պարոն Պէնդինկ, Թէպէտ և խիստ աղէկ գիտեմ ձեր արքունեաց հիմնադրած բռնած աւատաւոց ու անկարգ ճամբան, որով կըբռնադատէկոր զիս զԹագուհիս Սիկիլիայի, ու 'ի ծնէ արքայադուստրս Աւստրիոյ, որ հետ 45 տարվան միաբանութէ՝ Թողուլ զԹագաւորը իմ էրիկս և իմ տունս, ու ելլամ իմ հայրենի երկիրս քաշվիմ. ու աս կընէկոր այլեւայլ դեղեցիկ պատրուճակներով ծածանանէրով. երբեմն՝ ոչ թէ հորկ թշնամիին հետ ծածուկ միաբանութիւն ունեցերեմ, (չարաչար զրպարտութիւնը որ զամենքը կըկանչէմ թող գան ցըցնեն), և երբեմն ալ՝ ոչ թէ ես յայտնի Ինկիլիզի Տէրութեան խորհրդոցը դէմ գնելու ետեւէ եմ եղած, ու ուզերեմ Սիկիլիայի այսչափ դարուց եկած կարգը փոխել. վերջապէս թէպէտ և ազատ եմ ես Ինկիլիզի տէրութէն՝ որմէ զիս ամ 'ի ծննդենէ անկախ ըրերէ, բայց 'ի վերայ այսր ամէն հիմայ պէտք է որ հնազանդիմ լինծի տըված հրամանին, որովհետեւ կերեւնայ թէ միայն աս հնազանդութեամբս կրնամ իմ տունս պահել. ասոր համար

մար էր որ ես աս իմ ցաւոտ կենացս նեղութիւնները կըքաշէի կոր, ուստի հիմայ հիչ չեմ ուշանար աս վերջին զոհնալ ընելու համար, որ պէտքի իմ կեանքսալ ուտէ։

,, Ուրեմն Պարոն, կիմացնեմ հրամանոցդ, ու հրամանքնիդ ձեռքովնալ ձեր արքունեացը, թէ ուրիշ բանի համար չեմ յանձն նառներկոր աս բանս, հապա միայն ազգի համար. ու պատրաստ եմ աս ամսուս վերջերը ճամբայ ելլալ, երթալու համար Աւստրիոյ կայսեր իմ վեհափառ ազգականիս ու Թոռանցս երկիրը (1)։

,, Չեմ կրնար Սարտենեայ երթալ, զէրէմ չեմ ուզեր բաժնըլլիլ բոլոր իմին ազգատոհմիս ճիւղերէն, և ասոնցմէ բաժանումը վերջինը կըլլայ ան միայն՝ երբոր մահուն ձեռքը կիյնամ նէ. միշտ կըբաղձայի որ օտար երկիր չմեռնիմ։

,, Կըբաղձամ թէ ինչ կարգաւորութի որ պէտք է իմ երկիրս դառնալու համար նէ ըլլըլի, և որչափ կարելի է նէ դիւրայընեն ու կարճեցընեն ճամբաս. վ̄ զի տարիքս, ու քանի տարվան նեղութիւններով, ցաւով, ու ամմէն կերպ հալածմունքներով կորսըված առողջութիս; և ոչ ճամբաս լըմնցընելու յոյս կուտան ինծի։

,, Որովհետև աս բանուէ տակը լինալով չեմ կրնար, ու պէտք ալ չէ որ մնամ իմ աղնուատոհմութեանս ու իմ աստիճանիս ինկած բաները, անոր համար կըխնդրեմ ու կուզեմ որ առաջ կատարվի աս հետևեալ թէութիւններս, ու կըյուսամ Պարոն որ յանձն ընկալնէք ու ամ փութով կըկատարէք։

,, 1. Իմ պարտատէրներուս ապահովելուն տըվի վճարելու համար ինչ որ պարտական եմ անոնց, զէրէ չեմ ուզեր ելլէլ Սիկիլիայէն՝ առանց հոգալու այսպիսի մեծ գործքմը։ Կըխնդրեմ դարձեալ որ մէկ ճամբայովմը ձեռքս հասցընես իմին ելմասներս՝ որ աւանդ ՚ի պահ տըվեր եմ Բալերմոյի խազնային։

,, 2. Տըվէ ինծի բաւական ստակ, ինչխտար որ պէտք է խարճելու այսպիսի երկայն ճամբուն մէջ՝ որ բռնադատվելի եմ ընելու ՚ի հարկէ այնչափ ընկերութեամբ՝ որչափ որ կըվայլէ իմ աստիճանիս, որուն մէջը դըրեր է զիս Այ նախախնամութիւնը։

,, 3. Տըվէ ինծի բաւական ստակ՝ որ կարենամ աս իմ պատիւս պահել՝ գացած երկրիս մէջ, ու աս տըվէ ինծի միշտ առաջուց վեց ամիսը հեղմը։

,, 4. Թող տաք որ գան իմ հետս ամմէնքը՝ որոնք կուզեմ ես առնուլ իմ ծառայութեանս ու իմ որդւոյս Լէօբօլտին հետ՝ որ պիտոր ընէ ընկերութիւն իրեն խեղճ մօրը. ու որոնք իմմէ եկամուտ կէնէր ունէինէ՝ տըվի հիմայ ուր տեղ որ ըլլան պիտի ան անձինքները։

,, 5. Պատրաստվի իմ կարգաւորութեանս կէօրէ թագաւորական փրէկատ ըլլած նաւմընալ, ու այլ ուրիշ բեռան նաւեր, որոնց մէջը կարենան մնալ իմ մարդիկս ու իմ կահկարասիներս, և մանաւոր իմին հանգստութեանս համար կըխընդրեմ՝ որ փռէկատին նաւապետը ըլլայ մէկ վարպետ նաւապետմը, զէրէ խիստ շատ կըվախնամ ես ծովու ճամբայէն։

,, Կհաւատամ Պարոն Պէնդինկ, թէ աս իմ խնդրուածքներուս մէջը ուրիշ բան չէք գըտնար՝ բայց եթէ ինչ որ պատշաճ է և ինչ որ իրաւունք է, և ինչ որ պէտք է ըլլըլի այսպիսի երկայն ու վշտալի ճամբորդութեանմը համար՝ յոր կըբռնադատեկոր զիս ձեր տէրութիւնը։ Ինկիլթէռայէ ինծի եկած խապարներուն կէօրէ, ձեր կարգադրութիւնը կերեւցընէ թէ Սիկիլիայի վր̄ ունեցած իշխանութիւնիդ պէսի գործածէք ամմէն հարկաւոր ու պատշաճ հրամանները տալու ինչ որ պէտք ըլլայ։

,, Որովհետև մինչև հիմայ միակերպ առանց փոխվելու զօռ ըրէք ինծի մինչև վերջի շունչը՝ աս յետին թշուառութիւնը յանձն առնելու համար, ասկից ետև կրնամ հաստատ ըսել, թէ առանց ձեր արքունի հրամանները ձեռքէ թողլու, նոյնպէս պիտոր հաստատուն ըլլաք ապահովցընելու համար մէկ Բրինչիբէսայիմը վերջի օրերը կենացն՝ որ ինկեր է ամմէն սեւակ թըշուառութիւններու տակ, որուն դատաստանալ ինչ որ պէտք է՝ թէ ուշ, թէ կանուխ ձեր տէրութիւնը Ինկիլիզին ազգը սխալը ընէ։

,, Աս թուղթս կըխրկեմ կօր Մոգֆառլան Ծէնէռալին ձեռքովը՝ որուն շատ շատ շնորհակալեմ՝ իրեն խիստ անուշ հետս վարվելուն համար, որով և կըբաղձայի՝ որ իր

ձեռ-

---

(1) Աս Սիկիլիայի թագուհին էր մայրը Նեմչէի ասկից առաջ մեռած թագուհիին, և հիմակվան Ֆրանսըզի կայսրուհին՝ է իրեն թոռը։

ձեռքովը կարենայի իմանալ ամէն աս ծանր գործքիս վերաբերեալ խապարները ։

,, Կըխընդրեմ որ իմ յարգութիւնս ընէք մատամայ Պէնդինկին՝ որուն կակուղ սիրտը կըյուսամ թէ ցաւակից է ու ողբակից՝ աս իմ անիրաւ քաշած նեղութիւններուս վրայ ։

Ապրիլ. 1813 ։

Հաստատեալ. Թագուհի Սիկիլիոյ ։

(Մոնիթօր ։)

## ՄԵԾ ՏՈՒԳԱՅՈՒԹԻՒՆ

### Պատէնի.

Ռաշտատ. 5 Յուլիսի ։

Մէկ քանի հիւսիսային կողմէն եկած խապարներուն կերեւէ Տանիմարգայի զինուորական պատրաստութիւնը խիստ շատ է, ու նորէն միշտ շատցընելու եռանդ է զօրութիւնը՝ ամբողջ պահելու համար իրեն տէրութեան երկիրները, ու դէմ դնելու համար Շվէտին՝ թէ որ յարձակելու ըլլայնէ իր վրայ ։

Շվէտին տէրութիւնը յունիսի 20էն սկսեալ կըտրեց բոլորովին իրեն հաղորդակցութիւնը Տանիմարգային հետ ։ Ինչպէս մը կըխօսուվինքընէ՝ մեծ ապստամբութիւն եղերէ Սվէցիային մէջ, վա զի շատ բազմութիւն դէմ ելերէ հիմակուան Սթօքօլմի բռնած կառավարութեան վրայ ։ (Օրագր. Փարիզու ։)

## ՖՐԱՆՍԱ.

Փարէզ. 3 Յուլիսի ։

Տանցքայէ եկած գազեթաներուն մէջը հրատարակուեր աս հետեւեալ յորդորանաց Թուղթը՝ որ իրենց հեռացեալ Վարշավիայէն Լէհերները՝ Մոսկովներուն հոն մտնալէն ետեւ՝ իրենց ազգային զօրաց գունդերին, որոնք էին Ֆրանսացին քով ։

,, Ով զինուորներ ։

,, Լեհացւոց զօրաց գունդին զօրութիւնը, և բոլոր ազգին ջանքը, ամենեւին չկրցան արգելել Մոսկովի զօրաց առաջ գալը ։ Մոսկովները հիմայ կըտիրեն մեր մայրաքաղաքին, բայց ոչ փառք՝ կըվարկինկոր մեր հետը իբրեւ իրենց բարեկամներուն հետ ։ ամէն վախը փարատեցաւ մեզմէ ։ Ծանուցման Թղթերը Մոսկովի գլխաւոր Ճէնէռալին կապահովցընեն մեր քաղաքացիները թէ կըլլան անկից եւս մեծ ու բարերար Աղէքսանդր Մոսկովի կայսեր պաշտպանութեան տակը, և երկու ազգերուն սիրտը որոնք արդէն լեզուով ու սահմանակցութեամբ մօտ էին, հիմայ նորէն կապվեցան մեկզմէկու հետ սրտի բարեկամութեամբ ։ Մենք շատ տարիէն ի վեր է որ իմացանք, թէ Նաբօլէօն կայսրը մեր կըտրիճ զօրքերը չէ թէ մեր քաղքի երջանկութեան, ազատութեան, անկախութեանը համար կըգործածէ, այլ կըթափէ անոնց արիւնը՝ հաստատելու համար իրեն աթոռը ու իր մեծութիւնը ։ Կըտրիճ Մոսկովին ազգը ցըցուց մեզի՝ թէ իրեն տէրութիւնը ու ազատութիւնը պահելու համար, ի՞նչ մեծամեծ գործքեր կըրնայ ընել եղեր ։ Աղէքսանդր կայսրը ու կըտրիճ Մոսկովները յաղթեցին աւելի մեր սրտին, քան թէ իրենց զօրքը ։ Ով դուք մեր անյաղթելի զինուորներ, որ մինչեւ հիմայ Նաբօլէօնին դրօշակին տակը սուր կըքաշէք ձեր հայրենեաց ու բոլոր Եւրոպային օգտին դէմ, թողուցէք հիմայ մեր թշնամին դրօշակները, ու դարձէք խառնըվեցէք ձեր քաղաքացիներուն հետ. միաբանեցէք մեզի հետ ու սպասեցէք Աղէքսանդր կայսեր բարերարութիններուն՝ ճանչնալով անոր բարերարութիւնը՝ որով կըգթայ հայրաբար իրեն հաւատարիմ հպատակներուն ։ Մտիկ ըրէք աս ձեր քաղաքացեաց հրաւիրմանը, դարձէք անոնց քովը, և բանեցուցէք ձեր երկիրները՝ մեծցունելու համար ձեր ընտանիքը " ։

Ֆրանսըզի առաջապահ զօրաց գլխաւորին ձեռքը իյնալունպէս աս յորդորանաց Թուղթը, խրկեց շուտմը Տանձքա Ռապը Ճէնէռալին. աս Ճէնէռալն ալ առնելուն պէս իրեն ձեռքը, մէկէն հրաման տըվաւ Լէհի զօրաց գլխաւորներուն, որ մէկտեղ ժողված իրենց գունդերը՝ կարդան դիմացնին, ասով ուզեց ցըցընել թէ որչափ ապահով է անոնց զօրքերուն հաւատարմութեանը վրայ ։

Աս Թուղթըս երբոր կարդացվեցաւ Լեհացւոց գունդին առջեւը, ամենեկ նեղացան ու բարկացան աս գրօղներուն վրայ, և տըվին ամէնքը մէկէն պատասխան այսպէս ։

,, Կընամնիմ ըլլալ անոնք մեր եղբայրները՝

որոնք

որոնք մեզի կըխրկեն այսպիսի անիրաւ, անօրէն յորդորանք չարաչար ապստամբութե․ մենք գիտենք՝ Լեհացւոց սէրը՝ որ ունին իրենց հայրենեացը վրայ, և անհաշտելի ատելութիւնը որ ունին Մոսկովներուն դէմ, և յարումը՝ որ շատ տարիէն պէրի կապվերեն Ֆրանսըզներուն հետ։ Կըրնա՞յ ըլլալ մի արդեօք որ գրած ըլլայ Վարսավիան աս հրաւիրանաց թուղթը՝ միանալու համար մեր փառք սիրող թշնամիներուն հետ։ Կըրնա՞յ ըլլալ մի արդեօք որ ըլլայ մեր հայրենիքը աս հրաւիրողը՝ որուն թափած արիւնը Բրակային մէջ՝ դեռ կըբողոքէ Մոսկովներուն դէմ․ արդեօք կըգըտնըվի՞մի մէկ հարազատ բնակիչմը Վարսավիային մէջ, որ հաւատայ թէ մէկ Լեհցիմը մոռնալով իրեն հայրենական բնութը, փափաքի մտնել իրեն հայրենիքը՝ բռնալով դրօշակ Մոսկովի Տէրութե․ ամենևին չենք հաւտար։

„Աս գործքը է մէկ Մոսկովիմը գործք՝ որով միշտ ջանացերեն խաբել զանոնք՝ որոնք վախկոտ ըլլալով սիրտ չեն ըներ ամենևին դէմը առնելու։ Անոնք կըխոստանան իրենց պաշտպանութիւ․ Ի՞նչպէս կարելի է որ մոռնայ մէկ Լեհցիմը ան չարութե օրերը․ երբոր իրեն հայրենիքը կըտոր կըտոր ըրած յափշտակեց ու գրաւեց։ Անոնք կըհրատարակեն մեծաբանութե իրենց ըրած յաղթութիւնները, մի՞թէ մենք չենքմի ըրած յաղթութի, մի՞թէ մոռցերեն ան օրերը՝ որոնք Մոսքային ու Զմօլէնսքին առջևը՝ բոլոր աշխարքին դիմացը փառաւորվեցաւ․ արդեօք յաղթօղ կըսեպվի՞ն անոնք, որոնք այրեցին ու փախան իրենց հին ու անուանի քաղաքէն․ մենք ո՞վ Մոսկովներ թող կուտանք ձեզի անատենը խօսելու մեծաբանելու ձեր ըրած յաղթութիւններուն վրայ՝ երբոր ձեր դրօշակները տնկէք Փարիզու մէջ Դիւյլէրուի պալատին վրայ՝ ուրտեղ կըկենայ մեր միշտ յաղթօղ դաշնակիցը, ինչպէս որ Ֆրանսայի ու Լեհացւոց արծիւները տնկըվեցան Քրէմլինին վր Մոսքային մէջ։

„Ձեր յաղթութիւը՝ որով եկաք առաջ մինչև Լեհաստան, մինչև Տանձքայի քենարները, շնորհակալ ըլլայ մէկ դժնդակ կլիմայիմը ու սաստիկ ձմեռվանմը․ թող մէյմը մօտիկնայ գարունը, անատենը նորէն ետ կըդառնաք ձեր սահմանները․ սորվեցէք նախ թէ ի՞նչպէս պէտք է խօսիլ քաղաքավարութե բարակցած մարդիկներու հետ, որ մէկ խելացի մարդմը՝ կարենայ անոնց ականջ դնել․ ձեր խոստմունքները ասկից ետև ամենևին չեն կրնար զմեզ խաբել․ չի գըտնըվիր աշխարհքիս վրայ մէկ յոյսմը, մէկ ակնկալութիմը, որ կարենայ բաժնել զմեզ Նաբօլէօնէն․ իրեն յաղթութիւնները հիմն դրին մեր քաղաքներուն հաստատութե, ու հակառակն ձեր անօրէնութիւը ու անզգամութիւը աւրեց ապականեց բոլորովին․ մենք չենք ձգեր մեր ձեռքէն զէնքերնիս՝ մինչև որ անյաղթելի բազուկը մեծի Նաբօլէօնին չապահովցընէ մեր երկիրներուն ազատութիւը․ մենք նորէն կըհաստատենք մեր երդումը կեցցէ կայսրն՝ մեր անյաղթելի Թագաւոր, կեցցէն հայրենիք և մեր դաշնակիցք ”։ (Գազէթ Տանցիկայի-Մօնիթ։)

Օրինակը մէկ նամակիմը՝ որնոր կըգրէ Ալպուֆէռային դուքան, Ճէնէռալը Առաքօնայի մէջ եղած զօրացը վրայ, պատերազմի մէջ պաշտօնատէրին։

Վալէնձա, 4 յունիսի 1813։

Ո՛վ տէր, կէսօրէն ետև սահաթը 4 ու կիսուն թուղթ առի Թօրթօզայի գլխաւոր Ճէնէռալէն՝ որնոր գրերէր յունիսի 3ին, սահաթը 9 ու կիսուն․ և օրինակը աս թուղթին է հետևեալը․ „Ո՛վ տէր, թշնամիին
„նաւահանգէսը, տեսնըվեցաւ երէկ սա-
„հաթը 5ին Թառռակօնային առջևը, աս
„նաւահանգէսը կըբաղկանայ 180 կտոր
„նաւէ, և կերևնայ թէ կերթայկոր Վիլ-
„լանօվային ու Սիթէսին վրայ ”։

Աս պարագային մէջ որոշեցի ես ալ, որ 6 հազար հետևակով ու 8 հարիւր ձիաւորով երթամ սորին Քաթալօնեայ՝ Տէքաէն Ճէնէռալին զօրքը մէկ տեղ ժողվելու համար․ և թէ որ կարելիենէ զարնըվիմ Ինկլիզներուն հետ ալ։

Ծառայ քոյ եմ եմ։

Հաստատեալ․ Ալպուֆէռայի Տուքայ։
(Մօնիթօռ։)

---

Աս գործքս՝ որ է պատմութի հիմակվան ատենիս, տասնըհինգ օրը մէյմը կըտըպվի,
Ի ՎԵՆԵՏԻԿ Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ։